

1. ԳԻՏԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՂԻԱ Ս. ՔԱՍՈՒՆԻ, Հայ մշակույթի պատմությունը, Բեյրութ, 1954 թ.

Եղիա Ս. Քասունու աշխատությունն ընդգրկում է նոր քարե դարի ժամանակներից մինչև մ. թ. V դ. երկարաձգվող հայ կուլտուրայի պատմությունը:

Հեղինակը աշխատության առաջին մասում (առաջ Մշակույթին աղբյուրները) հետազոտում է նախասկզբնական շրջանի Հայաստանի կուլտուրայի, սկզբնական շրջանի նախահայկական քաղաքակրթությունների և հայ ժողովրդի կազմավորման հետ կապված մի շարք հարցեր:

Աշխատության երկրորդ մասում (առաջ Մշակույթը նախաքրիստոնեական շրջանին) ուսումնասիրված են մի շարք հարցեր, որոնք սերտ կապ ունեն հայ ժողովրդի կուլտուրայի նախաքրիստոնեական հարստության ժամանակ Հայաստանում տիրող վարչաձևի, կապալառական կազմակերպության, մտավորական գոյավիճակի, ինչպես նաև հեթանոս Արշակունիների օրով քաղաքական-հասարակական ուժերի և կուլտուրական առաջընթացի հետ: Տասը գլուխներից բաղկացած այս մասն ընդգրկում է մեր թվականությունից առաջ VI դարից մինչև մ. թ. III դարի վախճանը տևող ինը հարյուր տարվա ժամանակաշրջանը: Իսկ երրորդ մասում հեղինակը բնում է V դ. հայ դպրության հետ կապված մի շարք կարևոր հարցեր:

Եղիա Ս. Քասունու աշխատության վերջում գետնադրված է 1911 և 1927 թթ. Արմավիրում հայտնաբերված հունարեն երկու արձանագրությունների թարգմանված տեքստը, որը վերջված է Սովետական Հայաստանի Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրի» 1942 թ. առաջին և երկրորդ համարներից:

ՀՐԱՆԴ Ք. ԱՐՄԵՆ, Պապ Արշակունի, Ուսումնասիրություն, Երուսաղեմ, 1958 թ.

Աշխատությունը բաղկացած է երկու մասից, որոնք խորագրված են «Արշակ Ք» և «Պապ»:

Առաջին մասում հեղինակը ընդարձակ կերպով պատմում է մինչև Պապի դահակությունը Հայաստանում տիրող ազդային. կրոնական և քաղաքական վիճակի, ինչպես նաև Հայաստանի նկատմամբ Պարսկաստանի և Հռոմի տիրակալական ձգտումների մասին: Երկրորդ մասը Պապի յոթնամյա թագավորության պատմությունն է. որտեղ հեղինակը ներկայացնում է նախաքրիստոնեական տների հետզհետե շեշտվող կենտրոնախույս ձգտումները. որոնք գլխավորապես արտահայտվում են մի կողմից ազգամիջյան կռիվներով, մյուս կողմից էլ՝ Արշակունիների դարավոր հարստության դեմ ապստամբության փորձերով: «Հակառակ իր երիտասարդ տարիքին, Պապը՝ Արշակունիներու երբեմնի միահեծան հեղինակությունը վերահաստատված տնտեսու սկզբունքներով՝ փորձեց և քանաց հաստատակամ համառությամբ շարունակելու այս պայքարը... և վերջիվերջո տաքացող կռիվ հրաժարված մշտնջենական պիտի մղեր իր հակառակորդները, հայ և օտար, գավելու երիտասարդ Արարի կյանքին դեմ», — գրում է հեղինակը:

Հրանդ Ք. Արմենն իր գրքի ներածականում քննադատական վերլուծության է ենթարկում Փավստոսի հաղորդած տեղեկությունները Պապի մասին, և գտնում է, որ դրանք անաչառ չեն: Հավելվածն ընդգրկում է տեղեկություններ հեղինակի օգտագործած հայ և օտար աղբյուրների, չորրորդ դարի հայ թագավորների ու կաթողիկոսների, ինչպես նաև ժամանակագրական մի քանի հարցերի մասին:

ԱՐՇԱԿ ԱԼՊՈՅԱՆՅԱՆ, Պատմություն հայ գաղթականության, Բ հատոր, Կահիրե, 1955 թ.

Արշակ Ալպոյաճյանի այս աշխատության երկու հատորները հայ ժողովրդի գաղթների պատմությունը հնագույն դարերից (մ. թ. ա. VI դար) հասնում են մինչև XV դարը: Առաջին հատորը, որ լույս է տեսել 1941 թ., ընդգրկում է հայ ժողովրդի գաղթականության պատմությունը մ. թ. ա. VI դարից մինչև XI դարը. երկրորդ հատորը՝ 1040—1468 թթ. հայ ժողովրդի կյանքի շուրջ դար ընդգրկող այն ժա-

մանակաշրջանը, երբ Կենտրոնական Ասիայից դեպի արևմուտք արշավող ցեղերի հարվածների տակ հայությունը ճնշող մեծամասնությամբ ցրվում է աշխարհի չորս ծագերում՝ փնտրելով հանդիստ ու ապահովություն:

Աշխատության առաջին մասում պատմվում է Կենտրոնական Ասիայից արշավող ժողովուրդների՝ Հայաստանում հաստատած տիրապետության մասին, մասնավորապես սելջուկների (1064—1220), մոնղոլների (1220—1382) և թաթարների տիրապետության մասին, որոնք հայ ժողովրդի համար ստեղծեցին կյանքի անհանդուրժելի պայմաններ և պատճառ դարձան հայերի գաղթին: Երկրորդ մասում հեղինակը ներկայացնում է «Հայերի գաղթած վայրեր» աշխարհի չորս կողմերում: «Համաձայն իմ ծրագրիս,— գրում է Ա. Ալպոյաճյանը,— հայ գաղթականներուն իրենց նոր յնա-

կավայրերուն մեջ ունեցած կյանքին ամբողջական պատմությունը վերապահված է յուրաքանչյուր գաղութի մասնավոր և ընդարձակ պատմության: Հոս (Ի հատոր) ուզած եմ համառոտաբար ներկայացնել անոնց զարգացման և բարգավաճման հիմնական գծերը միայն, որպեսզի ընթերցողը գոնե ընդհանուր գաղափար մը ունենա: Այս մեթոդով հայ գաղթականության պատմությունը իր հիմնական գծերուն մեջ տրված պիտի ըլլա, և առանձին-առանձին վայրերու հայ գաղթականության պատմության պատրաստության աշխատանքը պիտի դուրսանա:

«Պատմություն հայ գաղթականության» երրորդ և վերջին հատորը, որ պիտի ընդգրկի հայ ժողովրդի գաղթերի պատմությունը XV դարից մինչև մեր ժամանակները, ինչպես նշում է հեղինակը զրբի առաջաբանում, պատրաստ է տպագրության:

2. ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՐԱՊԵՏ ԳԱԼՖԱՅԱՆ, Գիրք ելից Հայոց, Հուշագրություն, Բեյրութ, 1955 թ.

«Գիրք ելից Հայոցը» Ապրիլյան եղեռնի ողբերգության արյունոտ ֆոնի վրա գրված մի տեսակ ինքնակենսագրություն է, որ հեղինակը նոխարանել է տեսած և լսած դեպքերի, ինչպես նաև բազմաթիվ վկաների տարագրության հուշերի մասնակի ներառումով:

Այս գիրքը, շուրջ 650 էջ ծավալով, պատկերում է հայերի բռնագաղթի մինչև Հայկա, հայության բնաջնջումը սովի, համաճարակների և սրածովյան միջոցով Հայկա, Համայի, Գամակոսի, Հավրանի, Մանանի, ինչպես նաև Ռագ-գալի, Դերգորի անապատներում:

Կ. Գալֆայանի գիրքը պատմում է ոչ միայն Հայոց «բռնագաղթին, քսորի կարավաններուն, բնաջնջումին, և զազրելի, քստմենլի սև օրերու ու մնացորդին», այլև Արևմտյան Հայաստանի մի շարք հայաբնակ վայրերի՝ Չոմագլու, Ինձևու, Ֆենես, Էվերեկ, Տերեվենք, Թոմարգա, Կեսարիա, Կարին, Սեբաստիա, Զառաբարքերի ու ավանդությունների, ընտանեկան նիստուկացի և կուլտուրական կյանքի մասին:

ՍԱՐԳԻՍ Խ. ՏԵՈՎԼԵԹՅԱՆ, Հուշեր Շապին Գարահիսարեն, Փարիզ, 1954 թ.

Հուշգրական այս աշխատությունը պարունակում է մեծ մասամբ ականատեսի վկայություններ Շապին Գարահիսարի մոտավոր անց-

յալի պատմության, հասարակական և կուլտուրական դեմքերի մասին, ինչպես նաև տեղական բնույթ ունեցող մանրավեպեր, երգեր, պարերգներ և մի բառացանկ՝ Շապին Գարահիսարի բարբառում գործածական յուրահատուկ բառերի: Հատորի առաջին մասը հատկացված է Շապին Գարահիսարի հնագույն դարերի համառոտ պատմությանը և տեղագրությանը: Ապա որոշ մանրամասնություններով ներկայացվում են Շապին Գարահիսարի ու շրջակա գյուղերի հետ կապված պատմական նշանակություն ունեցող դեպքերը, XIX դարի վերջին բառորդից մինչև առաջին համաշխարհային պատերազմը: «Տեղական տիպարներ» և «Գարահիսարի հարսանիք» գլուխներում հեղինակը փորձել է տալ դարահիսարցիների բնութագիրը, հոգևրանությունը, տոհմիկ բարքերն ու սովորությունները: Գարահիսարի աշուղները ներկայացված են իրենց պոեմներից բաղված նմուշներով: Իսկ «Գարահիսարի բժիշկները» խորագրի տակ հեղինակը պատմում է XIX դարից սկսած Գարահիսարի նշանավոր բժիշկների և գավառական կարևոր գեղերի մասին:

Հուշերի երկրորդ մասն սկսվում է Արևմտյան Հայաստանի դիմադրական շարժման մասին թևեկ ակնարկով, որից հետո հուշագրողը պատմում է Գարահիսարի՝ 1895 թ. համիդյան ջարդերի, ինքնապաշտպանության կոիվների և հեռուսական առանձին դեպքերի մասին: Ապա հեղինակը Շապին Գարահիսարի պատմությունը հասցնում է մինչև առաջին համաշխարհային

պատերազմը: Հաջորդ հինգ զուխներում Ս. Խ. Տեովլեթյանը պատմում է Շապին Գարահիսարի հերոսամարտի մասին՝ հաճախ դիմելով կռիվներին մասնակից ռազմիկների վկայությունը: Աշխատության երրորդ մասը հեղինակի՝ Ղրիմում, Պոլսում և այլուր անցկացրած թափառական կյանքի նկարագրությունն է տրված օրագրի ձևով:

Վերջում հեղինակը կենսագրական հակիրճ տեղեկություններ է տալիս Գարահիսարում պաշտոնավարած գործիչների մասին, իսկ հավելվածում բերում է գավառի երգերի մի փունջ, որոնք ծայնագրված են կոմպոզիտոր Ա. Գ. Մեսսումենցի կողմից:

ԴՈԿՏ. Հ. ԹԵՔԵՅԱՆ, Առձեռն բառարան սաաֆներեն հայերեն, Բեյրութ, 1955 թ.

Այս բառարանը պարունակում է շուրջ երեսուն հազար բառ ու ասացվածք և ինչպես կազմողն է նշում, կոչված է ծառայելու Հարավային Ամերիկայի Բուենոս-Այրես, Մոնտեվիդեո, Սան-Պաուլո քաղաքներում բնակվող հայ նոր սերունդին:

Բառարանին կցված է իսպաներեն լեզվի բերականության մի համառոտ դասընթաց, ինչպես նաև իսպաներենի նախադաս և ետադաս մասնիկների ցանկ:

ԻՄԵ ՊԵԿՅԱՆ, Թե ինչպես Հրվանդանի աղջիկը Բերդաֆաղաֆ հարս տալին, Պատմվածքների ժողովածու, Ֆիլադելֆիա, 1958 թ.

Հուշագրական ձևով գրված այս հատորում հեղինակը պատկերում է Ամասիայում ապրած հայ ժողովրդի մոտավորապես կես գարի անցյալը, նկարագրելով բարբերը, սովորությունները, ամուսնության հետ կապված անգիր օրենքները, հարսի պարտականություններն ամուսնու ու նրա ազգականների նկատմամբ, մկրտությունները, քառասունքը, հոգեհանգիստը, ինչպես նաև Ամասիայի հայ դպրոցները, արհեստանոցները, արվեստագետներին, հոգևորականներին, մտավորականներին ու առևտրականներին:

Հեղինակն իր գրքի նյութերը հավաքել է վերապրող ամասիացիներից, և «գլխավորապես Հրվանդանից Բերդաֆաղաֆ հարս գնացած աղջկանից», որի կյանքի պատմությունն այս հատորի հիմքն է կազմում:

ԶԱՐՈՒՀԻ ՊԱՀՐԻ, Տայյան Գևորգ պեյ կամ Պատրիարքարանի փողոցի բնակիչները, Վեպ, Փարիզ, 1958 թ.

«Տայյան Գևորգ պեյ» վեպը Զարուհի Պահրիի վերջին գիրքն է, որ հանդիսանում է «Վոսիորի ափերուն վրա» ընդհանուր խորագիրը կրող եռհատոր շարքի երկրորդ հատորը: Նույն շարքի առաջին հատորը՝ «Տագրը», լույս է տեսել տարիներ առաջ, իսկ երրորդ՝ «Խավարի մեջ» հատորը մնում է անտիպ: Այս շարքը, ինչպես նշված է վեպի առաջաբանում, կազմում է մի տեսակ «համագրական ակնարկ 1875 թ. մինչև 1925 թ. պոլսահայ կյանքի, բարբերի, ապրելակերպի, մտայնության, հոգեբանության» և այլն:

Զարուհի Պահրիի այս վեպի հերոսները բոլորն էլ պոլսեցի լինելով, օգտագործում են պոլսահայ բարբառի յուրահատուկ բառերը, ոճային նրբությունները, որոնք կարող են իբրև ատաղձ ծառայել պոլսահայ բարբառը հետազոտողների համար:

Մ. ԱՎԵՏՅԱՆ, Հայ ազատագրական ազգային ճիւղնամյա (1870—1920 թթ.) հուշամատյան, Փարիզ, 1954 թ.

Մ. Ավետյանի գիրքն ընդգրկում է Բեռլինի կոնգրեսի նախօրյակից մինչև լոգանի կոնֆերանսը երկարաձգվող ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանի ազգային-ազատագրական շարժման գլխավոր մոմենտների պատմությունը: Նա պատմում է Զեյթունի, Սասունի, Պոլսի, Վանի ցույցերի և դրանք ղեկավարող կաղամակերպությունների ու դեմքերի մասին: Հատուկ զուխներ են հատկացված Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչության տեղահանության օրերին Ազ-Տաղում, Շապին Գարահիսարում, Վանում, Ուրֆայում, Սվեդիայում և այլուր տեղի ունեցած հերոսամարտերին, զբրքում խոսվում է Կարսի անկման, մայիսյան համաժողովրդական շարժումների, փետրվարյան դաշնակցական ավանտյուրայի և Հայաստանում սովետական կարգերի հաստատման մասին:

Մ. Ավետյանի գիրքը պատկերազարդ է: Գրքում կան Հայաստանի գունավոր մի քանի տեղ և ավելի քան հարյուր հասարակական, զինվորական ու պետական գործիչների նկարներ:

ԶԱՐՈՒՀԻ ԳԱԼԵՄՔՅԱՆՅԱՆ, Կյանքիս համբերեն, Անթիլիաս, Լիբանան, 1952 թ.

Զ. Գալեմքյանյանի գիրքը բաղկացած է յոթ մասից: Առաջին մասում «Ապրած էջերն»

ընդհանուր խորագրի տակ հեղինակը պատմում է իր մանկության տարիների հետ կապված անձնական և հասարակական հիշողություններ: Երկրորդ մասը, որ կոչվում է «Պատմվածքներ իրական կյանքի» ընդգրկում է հեղինակի գրական-ղեղարվեստական լեզվի մի մասը միայն. թվով քսան պատմվածք: Գրքի երրորդ մասում ներկայացված են Ավետիք Իսահակյանի, Արշակ Զոպանյանի, ղերասան Զովհ. Սևումյանի, Զովսեպի Փուշմանի, Փանոս Թևրեմեզյանի և ուրիշների զիմաստվերները: Զորրորդ մասի

նյութերը բաղված են Արևմտյան Հայաստանի տեղահանված հայության մնացորդների՝ որբերի և ալքերների կյանքից: Հինգերորդ մասը, որ կրում է «Ընտանիք և մայր» ընդհանուր խորագիրը, բարձրացնում է հայ կանանց վերաբերյալ հարցեր: Վեցերորդ՝ «Հայ լեզուն» մասում հեղինակը քննարկում է հայոց լեզվի և կուլտուրայի հետ կապված մի շարք խնդիրներ: Յոթերորդ՝ «Հայրենիքիս վերելքին» մասը նվիրված է Սովետական Հայաստանին:

3. ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՐԱՏՈՒ

Հայկական ՍՍՌ ազգային օրը Բյուսեի համաշխարհային ցուցահանդեսում

1958 թ. հոկտեմբերի 3-ին Բյուսեի համաշխարհային ցուցահանդեսի Սովետական Միության տաղավարում հատուկ հանդիսավորությամբ նշվեց Հայկական ՍՍՌ ազգային օրը: Այդ առթիվ Բեյրութի «Զարբն» թերթի Եվրոպայի թղթակիցը գրում է. «Տառնյակ հազարավոր այցելուներ այդ օրը դիտեցին Հայաստանի արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքի նմուշներ, հայկական արվեստի գործեր: Շենքի նախատին կծածաներ Հայկական ՍՍՌ ազգային դրոշակը: Ծուցազրվեցավ «Գարե ու տարիներ» հայկական դոկումենտալ կինոնկարը: Ամենուրեք կ'ենէր հայկական ազգային երաժշտությունը: Հեռուստատեսությամբ հանդես եկան Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության նախագահ Շ. Առուշանյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը, անվանի խաղողագործ Գ. Ասլանյանը, դարբին Ա. Մուրադյանը: Տոնակատարությանը ներկա էին Բելգիայում, Անգլիայում, Ֆրանսիայում և Իտալիայում ապրող հայերի մի մեծ խումբ:

Հայկական կինոնկարների ցուցադրում

«Իսի-Լե-Մուլինոյի» (Ֆրանսիա) հայ դադուիթը, — գրում է «Լույս Փարիզի» թերթը, — փութացած էր ներկա գտնվելու հայկական ֆիլմերու Լերկույթին, ուր ցուցադրվեցան «Գարե ու տարիներ», «Լեռնային լճի գաղտնիքը» ժապավենները: Երեսնի Հայկինոստուդիայի մեջ պատրաստված այս ժապավենները անպատում գոհունակություն պատճառեցին ներկաներուն, որոնցմե ոմանք առաջին առիթով պատահույթով կրուննային տեսնել հայկական ֆիլմերը:

* * *

Բուենոս-Այրեսի «Սինա Ռիվերա Բնտարգե» ընդարձակ կինոսահում ցուցադրվեցին Հայֆիլմ ստուդիայի արտադրած «Պատվի համար» և «Սիրտը երգում է» կինոնկարները: Արգենտինահայ մամուլի վկայությամբ հանդիսականները խանդավառ հետաքրքրություն ցուցաբերեցին ղեպի հայրենական կինոյի այդ երկու արտագրությունները: Գինոգիտումը կազմակերպել էր Արգենտինահայ մշակութային միությունը:

Ֆրանսահայ Երիտասարդների միությունում

Ֆրանսահայ Երիտասարդների միության (ԺԱՖ) 10-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը տեղի է ունեցել Լիոնում, 70-ից ավել պատգամավորների և հրավիրվածների ներկայությամբ, «Խիստ լուրջ և խանդավառ մթնոլորտի մեջ», ինչպես տեղեկացնում է «Լույս Փարիզի» թերթը: Օրակարգի գլխավոր խնդիրներն էին. ա) խաղաղությունը, բ) հայ և ֆրանսիական կուլտուրաների տարածումը, գ) ֆրանսիացիների և հայերի դարավոր բարեկամության ամրապնդումը և այլն: «Երեք օր Երիտասարդ պատգամավորները, — շեշտում է «Լույս Փարիզի» թերթի թղթակիցը, — լրջորեն մոտեցան օրակարգի հարցերուն: ԺԱՖ-ը անվերապահորեն ձեռք-ձեռքի տված մայր-հայրենիքի Երիտասարդության հետ, ալ ավելի ուժեղ և հաստատակամ՝ կմնա իր դիրքերուն վրա, աչքերը ուղղած Արարատի փեշերուն ծաղկող Մայր-Հայրենիքին»:

Աշխատություն հայ կերպարվեստի մասին

Արտասահմանի հայ մամուլից տեղեկանում ենք, որ Լեզիպոսահայ նկարիչ Ս. Ավետիսյանը

Ֆրանսերեն լեզվով պատրաստել է «Հայ նկուրիչներ և քանդակագործներ» խորագրով մի աշխատություն: Լեշխատությունը բաղկացած է երկու մասից և ներկայացնում է հայ նկարչական և քանդակագործական արվեստը սկզբից մինչև մեր օրերը: Առաջին մասը 144 էջ ծավալով նվիրված է հայ հնագույն արվեստին, երկրորդ մասը, որն ընդգրկում է XIX դարից մինչև մեր օրերը՝ ժամանակաշրջանը՝ 352 էջերի վրա պատմում է ավելի քան 160 հայ արվեստագետների ստեղծագործությունների մասին:

Նկարչունի վաժա Սարգիսի ցուցահանդեսը

Փարիզահայ նկարչուհի Վաժա Սարգիսի պատանեկության ցուցահանդեսը տեղի է ունեցել Զոյ Բարեգործական Ընկերություն միության Սկվար Ալպոնիի մատենադարանի սրահում, «Երկու տասնյակ յուզաների պատկերները, — գրում է «Լույս Փարիզի» թերթը, — վերջին գործերը

արվեստագիտուհին՝ զարդարած էին Մատենադարանի որմները լույսի, գույներու, երանդներու ակնապար շողյուններով»: Ըստ այդ թերթի թվականի հաջողությունն են ունեցել հատկապես նկարչուհու «Արարատ լեռը», «Տաթևի հին վանքը», «Հայ պարուհիներ» և «Հայրենաբաղձություն» նկարները:

Բուլղարիայի հայ երգի և պարի անսամբլը

Վատնալի «Երեան» երգի և պարի անսամբլը համերգային մեծ ծրագրով հանդես է եկել Կոլարովդրագում: Ծրագրում եղել են հայկական ժողովրդական երգեր և սովետահայ կոմպոզիտորների ստեղծագործություններ: Համերգները ղեկավարել են զիրիժյորներ Մեչքովը և Ա. Բերբերյանը: Մենակատարներից աչքի է ընկել Բ. Կարապետյանը, որը հատկապես լավ է կատարել «Հայաստան» և Ա. Ալվազյանի «Կարինե» երգերը: